ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 1998 թվականի, № 29
քաղ. Երևան

ՀՀ էներգետիկայի բնագավառի բնական գազի բաշխման և փոխադրման(տեղափոխման) լիցենզիաների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36 հոդվածով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի բնական գազի բաշխման լիցենզիայի ձևը և լիցենզիայով սահմանվող՝ գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները (հավելված 1) :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի բնական գազի փոխադրման (տեղափոխման) լիցենզիայի ձևը և լիցենզիայով սահմանվող՝գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները (հավելված 2):
3. Սահմանել, որ լիցենզավորման ընթացքում, տնտեսավարող սուբյեկտների կողմից հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա, հանձնաժողովը կարող է տվյալ լիցենզիայի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահ՝ **Վ.Մովսեսյան**